

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի 2023թ. հոկտեմբերի 17-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 26-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Մրցութային ընտրություն՝ ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի թափուր պաշտոնը համալրելու նպատակով:
2. Մրցութային ընտրություն՝ ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնը համալրելու նպատակով:
3. Մրցութային ընտրություն՝ ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչի թափուր պաշտոնը համալրելու նպատակով:
4. Ընթացիկ հարցեր:

1. **ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի ընտրության մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը հայտնեց, որ ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթին մասնակցելու համար դիմել է նույն ամբիոնի տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը: Մրցութային հանձնաժողովի նախագահը ներկաներին ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունները:

2. Ելույթ ունեցան տ.գ.դ., պրոֆեսոր Մ.Միքայելյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը, տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը, տ.գ.թ., ասիստենտ

Կ.Սահակյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը: Ելույթ ունեցողները իրենց գոհունակությունը հայտնեցին ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդի անձի, մասնագիտական կարողությունների և աշխատանքային փոխշփումների վերաբերյալ: Ողջունեցին ամբիոնի արդյունավետ գործունեությանը ուղղված թեկնածուի ներկայացրած ծրագրային դրույթները և կոչ արեցին անպայման իրագործել ծրագրային ելույթում ներկայացրած առաջարկությունները: Գիտխորհրդի անդամներին կոչ արեցին կողմ քվեարկել թեկնածուին:

ՈՐՈՇԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի պաշտոնի համար տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանի ընտրության հարցը դնել փակ քվեարկության: Այս կապակցությամբ, փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով գիտխորհրդի նախագահ տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանի առաջարկով ֆակուլտետի գիտխորհրդի որոշմամբ՝ դրա անդամներից բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ տ.գ.թ., դոցենտ Գայանե Ղուկասյան (նախագահ), տ.գ.թ., ասիստենտ Գնել Սահակյան, ՏԿՖ «Կառավարում» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Վիկտորյա Մաթևոսյան:

ԼՍԵՑԻՆ. Հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Խորհրդի նիստին ներկա են եղել 32 անդամներից 26-ը, ովքեր բոլորն էլ մասնակցել են քվեարկությանը: Քվեարկության արդյունքները հետևյալն են՝ տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանի օգտին քվեարկել է գիտխորհրդի 26 անդամ, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքները, տ.գ.թ., դոցենտ Գրիգոր Ռաֆայելի Հայրապետյանին համարել ընտրված ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի պաշտոնում և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին հաստատելու Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի սույն որոշումը:

2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչի ընտրության մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը հայտնեց, որ ԵՊՀ

Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթին մասնակցելու համար դիմել է նույն ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը: Մրցութային հանձնաժողովի նախագահը ներկաներին ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունները:

2. Ելույթ ունեցան տ.գ.դ., պրոֆեսոր Մ.Միքայելյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը, տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը: Ելույթ ունեցողները իրենց գոհունակությունը հայտնեցին ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդի անձի, մասնագիտական կարողությունների և աշխատանքային փոխշփումների վերաբերյալ: Ողջունեցին ամբիոնի արդյունավետ գործունեությանը ուղղված թեկնածուի ներկայացրած ծրագրային դրույթները և կոչ արեցին անպայման իրագործել ծրագրային ելույթում ներկայացրած առաջարկությունները: Գիտխորհրդի անդամներին կոչ արեցին կողմ քվեարկել թեկնածուին:

ՈՐՈՇԵՑԻՆ. ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչի պաշտոնի համար տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի ընտրության հարցը դնել փակ քվեարկության: Այս կապակցությամբ, փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով գիտխորհրդի նախագահ, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանի առաջարկով ֆակուլտետի գիտխորհրդի որոշմամբ՝ դրա անդամներից բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ տ.գ.թ., դոցենտ Գայանե Ղուկասյան (նախագահ), տ.գ.թ., ասիստենտ Գնել Սահակյան, ՏԿՖ «Կառավարում» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Վիկտորյա Մաթևոսյան:

ԼՍԵՑԻՆ. Հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Խորհրդի նիստին ներկա են եղել 32 անդամներից 26-ը, ովքեր բոլորն էլ մասնակցել են քվեարկությանը: Քվեարկության արդյունքները հետևյալն են՝ տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի օգտին քվեարկել է գիտխորհրդի 23 անդամ, դեմ՝ 2, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 1:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքները, տ.գ.թ., դոցենտ Աննա Հովիկի Հակոբջանյանին համարել ընտրված ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչի պաշտոնում և միջնորդել ԵՊՀ գիտական

խորհրդին հաստատելու Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի սույն որոշումը:

3. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչի ընտրության մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը հայտնեց, որ ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցութին մասնակցելու համար դիմել է նույն ամբիոնի տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը: Մրցութային հանձնաժողովի նախագահը ներկաներին ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունները:

2. Ելույթ ունեցան տ.գ.դ., պրոֆեսոր Մ.Միքայելյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը, տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը: Ելույթ ունեցողները իրենց գոհունակությունը հայտնեցին ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդի անձի, մասնագիտական կարողությունների և աշխատանքային փոխշփումների վերաբերյալ: Ողջունեցին ամբիոնի արդյունավետ գործունեությանը ուղղված թեկնածուի ներկայացրած ծրագրային դրույթները և կոչ արեցին անպայման իրագործել ծրագրային ելույթում ներկայացրած առաջարկությունները: Գիտխորհրդի անդամներին կոչ արեցին կողմ քվեարկել թեկնածուին:

ՈՐՈՇԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչի պաշտոնի համար տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանի ընտրության հարցը դնել փակ քվեարկության: Այս կապակցությամբ, փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով գիտխորհրդի նախագահ, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանի առաջարկով ֆակուլտետի գիտխորհրդի որոշմամբ՝ դրա անդամներից բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ տ.գ.թ., դոցենտ Գայանե Ղուկասյան (նախագահ), տ.գ.թ., ասիստենտ Գնել Սահակյան, ՏԿՖ «Կառավարում» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Վիկտորյա Մաթևոսյան:

ԼՄԵՑԻՆ. Հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Խորհրդի նիստին ներկա են եղել 32 անդամներից 26-ը, ովքեր բոլորն էլ մասնակցել են քվեարկությանը: Քվեարկության արդյունքները հետևյալն են՝ տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանի օգտին քվեարկել է գիտխորհրդի 26 անդամ, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքները, տ.գ.թ., դոցենտ Ալվարդ Ալբերտի Խառատյանին համարել ընտրված ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչի պաշտոնում և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին հաստատելու Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի սույն որոշումը:

4. Ընթացիկ հարցեր

4.1 ԼՄԵՑԻՆ. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման կարգը հաստատելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը տ.գ.թ., դոցենտ Գ.Ասլանյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը: Դեկան Կ.Խաչատրյանը ամփոփ ներկայացրեց սույն կարգի ընդհանուր և եզրափակիչ դրույթները, հանգամանալից մեկնաբանեց կատարողականի գնահատման բաղադրիչները /թվով 5/ և կարգը: Հավելեց, որ ԵՊՀ-ում չի եղել նմանօրինակ փորձ և կարգի հաջող կիրարկումից հետո փորձը կփոխանցվի մյուս ֆակուլտետներին: Սույն կարգով դասախոսի գործունեության գնահատման հիմքը օբյեկտիվիզմն է՝ դասախոսը կփորձի տարբեր ուղղություններով ներգրավվածություն ունենալ ֆակուլտետային աշխատանքներին, կձգտի բարձր կատարողականի և ներառականությանը ֆակուլտետի կյանքին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման կարգը:

4.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա հայցորդ Ռաֆիկ Գագիկի Մաշուրյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը հայտնեց, որ հայցորդը հաշվետու տարվա պլանով նախատեսված աշխատանքները. «Կազմակերպությունների խմբի ֆինանսական և գործառնական կառավարման մոդելավորման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության կառուցվածքի հստակեցում, մասնագիտական գրականության ուսումնասիրում, տվյալների հավաքագրում, դրամական հոսքերի մոդելավորման փորձ՝ ցուցանիշների հաշվեկշռված համակարգի միջոցով, կատարել է պահանջվող որակով և ծավալով, ինչը բավարար է ատեստավորման համար:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 04.10.23թ. կայացած նիստի որոշումը, հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում Ռաֆիկ Մաշուրյանի կատարած աշխատանքը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ 1-ին տարվա հայցորդ Ռաֆիկ Գագիկի Մաշուրյանի կատարած աշխատանքը համարել բավարար և ատեստավորել: Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի սույն որոշումը:

4.3 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մագիստրոսի կրթական ծրագրի երկրորդ կուրսի ուսանողուհի Միլենա Հարությունի Գալստյանին, «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսի կրթական ծրագրի երկրորդ կուրսի ուսանող Սարգիս Ռոբերտի Հակոբյանին, բակալավրիատի «Ֆինանսներ» կրթական ծրագրի երրորդ կուրսի ուսանող Վահե Չավենի Ասատրյանին և բակալավրիատի «Կառավարում» կրթական ծրագրի չորրորդ կուրսի ուսանողուհի Անահիտ Սամվելի Անոյանին ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հայտարարած «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման» մրցույթին մասնակցությունը երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. տ.գ.թ., դոցենտ Կ.Գ. Խաչատրյանը նշեց, որ Մ.Հ. Գալստյանը, Ս.Ռ. Հակոբյանը, Վ.Չ. Ասատրյանը և Ա.Ս. Անոյանը ուսումնառության ընթացքում

ցուցաբերել են գերազանց առաջադիմություն, ակտիվորեն մասնակցել են ֆակուլտետի գիտական միջոցառումներին, կոնֆերանսներին, ցուցաբերել են վերլուծական կարողություններ:

ՈՐՈՇԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մագիստրոսի կրթական ծրագրի երկրորդ կուրսի ուսանողուհի Միլենա Հարությունի Գալստյանին, «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսի կրթական ծրագրի երկրորդ կուրսի ուսանող Սարգիս Ռոբերտի Հակոբյանին, բակալավրիատի «Ֆինանսներ» կրթական ծրագրի երրորդ կուրսի ուսանող Վահե Ջավենի Ասատրյանին և բակալավրիատի «Կառավարում» կրթական ծրագրի չորրորդ կուրսի ուսանողուհի Անահիտ Սամվելի Անոյանին երաշխավորել ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հայտարարած «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման» մրցույթին մասնակցելու համար:

ԵՊՀ ՏԿՑ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՊՀ ՏԿՑ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ